ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶ

ՆԵՂՈՑ ՀԱՄԱՅՆՔԻ

2017-2021թթ.

ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ

ՀՆԳԱՄՅԱ ԾՐԱԳԻՐ

Կազմեց համայնքի ղեկավար Վ.Անթանեսյանը

Քննարկվել և հաստատվել է Նեղոց համայնքի ավագանու 2016թ. դեկտեմբերի 19-ի նիստի 30-Ն որոշմամբ:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ինչ է հնգամյա ծրագիրը

1.Համայնքի իրավիճակի գնահատում.

2.Համայնքի ռազմավարությունը և հիմնական նպատակները.

3.Ըստ առանձին բնագավառների առաջնահերթ ծրագրերի նպատակների առաջադրում և կոնկրետ խնդիրների ձևակերպում.

4.Համայնքի բյուջեի ֆինանսական միջոցների գնահատում և կանխատեսում.

5.Համայնքի զարգացման հնգամյա ծրագրի հիմնական ցուցանիշները:

ԻՆՉ Է ՀՆԳԱՄՅԱ ԾՐԱԳԻՐԸ

Համայնքի զարգացման հնգամյա ծրագիրը այն հիմնական փաստաթղթերից մեկն է ,որը մշակում է համայնքի ղեկավարի և նրա աշղատակազմի կողմից, քննարկվում և հաստատվում է համայնքի ավագանոկողմից և դրվում է գործողության մեջ:Այն իրենից ներկայացնում է համայնքի սոցիալ -տնտեսական իրավիճակի համալիր վերլուծության և առկա հիմնսխնդիրների բացահայտման, ֆինանսական, սնտեսական և մարդկային ռեսուրսների գնհատման արդյունքում նպատակային զարգացման տեսանկյունից ձեռնարկվելիք քայլերի ամբողջություն, որը նախատեսում է ռազմավարական քաղաքականությամբ համայնքի խնդիրների արդյունավետ լուծումը և նպատակային բյուջետավորման գործընթացի իրականացումը:

ԺՈՂՈՎՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

1. Համայնքի մշտական բնակչության ընդհանուր թիվ	338
• տղամարդ	162
• կին	176
• նախադպրոցական տարիք (0-6 տարեկան)	42
• դպրոցական տարիք (7-17 տարեկան)	30
• միջին տարիքի (16-62 տարեկան)	120
• 63 տարեկանից բարձր	28
• տնտեսությունների թիվը	95
• գրանցված ընտրողների թիվը	262

Համայնքը բաղկացած է 95 տնտեսությունից, որից 10-ը նպաստառու են:

ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐ

2016թ. հոկտեմբերի 02-ին համայնքի ղեկավար է ընտրվել Վարդան Արարատի Անթանեսյանը:Բնակչության սոցիալ-տնտեսական պայմանների բարելավման ,համայնքի հիմնախնդիրների լուծման համար Նեղոց համայնքի ղեկավարը,համայնքի նորընտիր ավագանին իր 5 անդամներով նպատակասլաց պետք է ծախսեն համայնքի բյուջեի ֆինանսական միջոցները:Անհրաժեշտության և հնարավորության դեպքում հայթայթելու պետբյուջեից, միջազգային և տեղական դոնոր կազմակերպություններից:

Համայնքապետարանի աշղատակազմն ունի հետևյալ կառուցվածքը.

Համայնքի ղեկավարի տեղակալ - 1 միավոր

Աշխատակազմի քարտուղար - 1 միավոր

Առաջատար մասնագետ _հաշվապահ- 1 միավոր

Աշխատակազմի աշխատողների ընդհանուր թիվը՝ 3 մարդ:

ՀՈՂԱՏԱՐԱԾՔԻ ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄԸ

Համայնքի վարչական տարածքը 423.0 հա,որից՝

Վարելահող	22.5 հա
Խոտհարք	46.5 հա
Տնամերձ	12.3 հա
Արոտավայր քարքարոտ	109.0 հա
Պատմամշակութային	0.61 հա
Սեփականաշնորհված	50.0 հա
Մեկ հողաբաժինը	0.3 հա

ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Ազգաբնակչությունը զբաղվում է անասնապահությամբ,որի համար համեմատաբար բարենպաստ պայմաններ չկան:

Հողագործությամբ և այգեգործությամբ զբաղվում են տնամերձ հողամասերում և կաթի վերամշակումը իրականացվում է տնային պայմաններում:Կաթնամթերքը վաճառվում է շուկայում:

ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԻՋՈՑՆԵՐ

Համայնքում առկա է 1 միավոր գյուղտեխնիկա/անվավոր/:

Քաղաքի հետ կապը իրականացվում է ավտոբուսներով՝200 դրամ արժեքով և տաքսիների միջոցով:

ՃԱՆԱՊԱՐՀ

Համայնքը Ալավերդուն է միացված 14 կմ երկարությամբ ասֆալտապատ ճանապարհով:

Համայնքը ունի գյուղամիջյան 2-2.25 կմ երկարությամբ ճանապարհներ,սակայն այն գտնվում է անմխիթար վիճակում:

ԿՐԹՈՒԹՅՈՒՆ, ՄՇԱԿՈՒՅԹ, ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅՈՒՆ

Կրթական համակարգը ներառում է միջնակարգ դպրոց:

Կրթությունն իրականացվում է Նեղոցի հիմնական դպրոցում:

Դպրոցը հիմնվել է 1990թ.-ին,այժմ կապիտալ վերանորոգված է:

Դպրոցը համալրված է մասնագետ կադրերով,և աշակերտով:Դպրոցը գազաֆիկացված չէ,ջեռուցումը կատարվում է փայտե վառարաններով,ունի մշտական խմելու ջուր,ունի կոյուղի:

Սովորողների թվաքանակը ստաբիլ չէ՝ պայմանավորված ծնելիության լուրջ խնդրի հետ:

Դպրոցին կից գործում է նախակրթարան,որտեղ հաճախում են 14 երեխա:Շրջանավարտները ուսումը շարունակում են հիմնականում Ալավերդու,ինչպես նաև հանրապետության այլ բուհերում ու կրթօջախներում:

Համայնքն ունի <<Համայնքային կենտրոն>>որը կառուցվել է 2011թ.-ին:Համայնքային կենտրոնում է գործում բուժկետը:Վերջինս սպասարկվում է Ախթալայի առողջապահության կենտրոն ՓԲԸ-ի կողմից:Ապահովված է անհրաժեշտ գույքով:

ՀԱՄԱՅՆՔԻ ԻՐԱՎԻՃԱԿԻ ԳՆԱՀԱՏՈՒՄ

Լոռու մարի (նախկին Թումանյանի շրջանի) Նեղոց համայնքը պատմական արձանագրություններում հիշատակվում է դեռևս 16-17 դարերում:Այն ավելի հին է քան ենթադրվում է,որը վկայում են համայնքի շրջակայքում գտնվող խաչքարերը:
Համայնքը գտնվում է ծովի մակերևույթից 650մ բարձրության վրա :Համայնքի կլիման ձմռանը մեղմացուրտ է , իսկ ամռանը՝ շոգ:Հաճախակի են չերային երաշտի տարիները,որից շատ են տուժում գյուղատնտեսությամբ և անասնապահությամբ զբաղվող գյուղացիները:Համայնքը հարուստ է անտառներով,վայրի բերքատու ծառերով և բնական աղբյուրներով: Ներկայիս Նեղոցի նախնիները եղել են Հաղպատից ՝170-180 տարի առաջ:

Համայնքի շրջակայքում կան 50-ից ավելի խաչքարեր:

1941-1945թթ.Հայրենական Մեծ պատերազմին մասնակցել են 40 զինվորներ,որից 17-ը զոհվել են:

1976թ.համայնքի կենտրոնում կառուցվել է Հայրենական Մեծ պատերազմում զոհվածների շուշաքարը:

2006թ.նույն տարածքում Արտաշես,Արմեն և Վահան Բեգջանյանների հովանավորության ներքո կառուցվեց Սուրբ Գայանե մատուռը:

Համայնքի նախկին շրջկենտրոնից՝ Ալավերդուց գտնվում է 14 կմ և մարզկենտրոնից՝ Վանաձորից 66 կմ հեռավորության վրա:

Ջ ՈՒ Ր

Համայնքը գտնվում է Հայջրմուղկոյուղի ՓԲԸ հյուսիս-արևելյան մասնաճյուղի մոտ և ջրամատակարարումը կատարվում է գրաֆիկով:Համայքնը ունի նաև բնական աղբյուրներ,որից բնակչության մի մասը օգտվում է շուրջօրյա:

Գ Ա Զ

Համայնքը գազաֆիկացված չէ:

ՀԱՄԱՅՆՔԻ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՀԻՄՆԱԿԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ

Ռազմավորություն.

Բարեփոխումներ անցկացնելու նպատակով հետևողականորեն բարելավել համայնքի բնակչության սոցիալ տնտեսական,մշակութային և հանգստի պայմանները,համայնքը դարձնել գեղեցիկ,բարեկարգ և ամենակիրթ բնակավայրերից մեկը:

Բարեփոխումներ կատարելով նախատեսվում է հասնել հետևյալ նպատակներին.

1.զարգացնել անասնապահությունը համայնքում.

2.զարգացնել հողագործությունը և այգեգործությունը ձեռք բերելով համայնքի համար անհրաժեշտ տեխնիկան.

3.կազմակերպել համայնքի բնակչության մշակութային կյանքը,հանգիստը աշխատանքից ազատ ժամանակ.

4.վերանորոգել գյուղամիջյան ճանապարհները և սելավատար ձորակները.

5.գազաֆիկացնել համայնքը:

Ըստ առանձին բնագավառների առաջնահերթ ծրագրի նպատաների առաջադրում և կոնկրետ խնդիրների ձևակերպում:

ԾՐԱԳԻՐ 1

Գազաֆիկացում.

Ներածություն

Նեղոց համայնքը տարածաշրջանում միակ համայնքներից է,որ դեռևս խորհրդային տարիներից գազաֆիկացված չե,այն դեպքում, երբ գազամուղ գտնվում է 1.5 կմ հեռավորության վրա:Գազաֆիկացված չլինելու պատճառով խիստ տուժել են համայնքի մերձակա անտառները:

Ծրագրի իրականացման նպատակներն են.

-ապահովել համայնքի բնակիչներին բնական գազով

-բարելավել բնակիչների կենցաղային պայմանները

-կանխել համայնքի մերձակա անտառների աչնչացումը:

Խնդիրները.

Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ է ներգրավել միջազգային դոնոր կազմակերպությունների ֆինանսական աջակցումը:

Ծրագրի համար անհրաժեշտ է 35 մլն դրամ ,որի 10 տոկոսի ներդրումը համայնքը պատրաստ է կատարելու:

Ծրագիր 2

Համայնքի էլէկտրական հոսանքի հենասյուների և մալուխների վերականգնում

Նկարագիրը-էլեկտրական հոսանքի հենասյուները և մալուխները գտնվում են խիստ անբարեկարգ վիճակում և մեծ վտանգ են ներկայացնում բնակչության համար:Դրանք խիստ վտանգավոր են հատկապես այն վայրերում,որոնք գտնվում են ճանապարհաեզրերին,անցանելի վայրերում, քանի որ մաշվածության հետևանքով այդ հենասյուները թեքվել են ճանապարհներին և վտանգավոր են անցորդների համար:

ԾՐԱԳԻՐ 3

ՆԵՐՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՃԱՆԱՊԱՐՀԻ ԲԱՐԵԿԱՐԳՈՒՄ

Նկարագիրը Երևան-Թբիլիսի մայրուղուց համայնքի 1-ին փողոց թեքվող ճանապարհի հենց սկզբնական մասից գյուղամիջյան ամբողջ ճանապարհները անբարեկարգ են: Ներհամայնքային ճանապարհը գրունտապատ է,այն նեղ,ոլորապտույտ ձգվում է մինչև գյուղի վերին հատվածը:

Անձրևաջրերը երբեմն շեղվում են սելավատարներից և ճանապարհի կտրուկ թեքությունը նպաստում է գրունտի քայքայմանը:

Ճանապարհները լի են ջրափոսերով-խորդուբորդերով:Համայնքային բյուջեից կամ համայնքի ղեկավարի և բնակչության ուժերով պարբերաբար բարեկարգվում,խճապատվում են գյուղամիջյան որոշակի հատվածներ,սակայն թեք տեղանքի,սելավների պատճառով այն նորից քանդվում է:

Նպատակը-բարեկարգել գյուղի փողոցները-ճանապարհները,մաքրել սելավատարները,ասֆալտապատել ճանապարհը,փողոցները:Համայնքը դարձնել բարեկարգ:

Խնդիր 1- Կատարել համայնքի փողոցների փոսային նորոգումները,խճապատում,հարթեցում:Աշխատանքները կատարել համայնքի բյուջեի միջոցներով:

Արդյունքները-Կբարեկարգվի համայնքի տարածքը,փողոցները,ճանապարհները,կվերանան փոսաջրերը,փոշին:Կկանոնավորվի տրանսպորտի աշխատանքը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԳՈՒՅՔԻ ՑԱՆԿ

1.Համայնքային կենտրոնի շենք:

2.Գրադարան

3.Ներհամայնքային փողոցներ և ճանապարհներ

4.Հայրենական Մեծ Պատերազմի հուշարձան

5.Պատմական խաչքարեր

6.Ս.Գայանե մատուռ

7.Գերեզմանատուն

ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵԻ ՄՈՒՏՔԵՐԻ ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ

Համայնքի 2015-2016թթ. բյուջեների մուտքերի ցուցանիշները և 2017-2021թթ. բյուջեների մուտքերի կանխատեսումը

Հ/հ	ՄՈՒՏՔԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ	2015թ. փաստ.	2016թ. հաստ.	2017թ. նախ .	2018թ. կանխ.	2019թ. կանխ.	2020թ. կանխ.	2021թ. կանխ.
	ԸՆԴԱՄԵՆԸ ՄՈՒՏՔԵՐ		7214.5	7733.7	8252.9	8772.1	9291.3	9810.5
1	Հողի հարկ	221.7	245.1	248.7	248.7	248.7	248.7	248.7
2	Գույքահարկ	502.1	431.0	495.7	505.0	514.3	523.6	532.9
3	Տուրքեր	60.0	40.0	40.0	40.0	40.0	40.0	40.0
4	Պաշտոնական դրամաշնորհներ	5917.1	5960.4	6003.4	6046.4	6089.4	6132.4	6175.5
5	Այլ եկամուտներ	352.5	436.0	519.5	603.0	686.5	770.0	853.0

ԵԶՐԱՓԱԿՈՒՄ

Նկատի ունենալով, որ համայնքի զարգացման հնգամյա ծրագրով նախատեսված աշխատանքները հիմնականում կախված են բյուջեի կատարումից, ապա սկզբնական փուլը պետք է հանդիսանա բյուջեի կատարման ապահովումը: Մյուս գործոնը հովանավորներ գտնելն է: Այս երկուսի զուգակցումով, կազմակերպված և քրտնաջան աշխատանք կատարելով կարելի է հասնել համայնքի զարգացման հնգամյա ծրագրով նախատեսված աշխատանքների կատարմանը:

Հնգամյա ծրագիրը հիմք կհանդիսանա համայնքի տարեկան բյուջեների և սոցիալ տնտեսական զարգացման տարեկան ծրագրերի կազմման համար:

Նեղոց համայնքի ղեկավար Վ.Անթանեսյան